ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պատմ. գիտ. դոկտոր Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ

Արևմտյան Հայաստանի պատմության հարցերը զգալի տեղ են գրավել նախասովետական հայ պատմագրության մեջ։ Վենետիկի Մխիթարյանների հրատարակած ստվարածավալ աշխատությունների մեծ մասը նվիրված է Արևմտյան Հայաստանի պատմությանը։ Հիշատակության արժանի են առաջին հերթին Մ. Չամչյանի[1], Ղ. Ինճիճյանի[2], Գ. Այվազովսկու[3], Ա. Գալֆայանի[4], Ղ. Ալիշանի[5] աշխատությունները։

Հայ պատմագրության այս ներկայացուցիչների աշխատություններում առկա են խոր ատելություն դեպի թուրք զավթիչներն ու ջարդարարները և ջերմ համակրանք՝ սուլթանական դեսպոտիզմի լծի տակ գտնվող ժողովուրդների ազատագրական պայքարի նկատմամբ։ Նշված հեղինակները հանդես են գալիս ոչ միայն պատմական փաստերը սոսկ նկարագրողի դերում, այլև դրանց համադրման և վերլուծման միջոցով անում են իրենց եզրահանգումները։ Նրանց աշխատություններում բերված են բազմաթիվ ու բազմապիսի վավերագրեր թուրքերեն ու եվրոպական լեզուներով, որոնք Արևմտյան Հայաստանի պատմության հարցերը լուսաբանելիս կարող են սկզբնաղբյուրների դեր կատարել։

XIX դարի երկրորդ կեսի հեղինակներից հիշատակության արժանի է նաև Ավետիս Պերպերյանը, որի հայ ժողովրդի պատմությանը նվիրված աշխատությունը լույս տեսավ նրա մահից մեկ տարի հետո՝ 1871 թ. Կ. Պոլսում։ Ճարադրելով հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած XVIII դարի վերջին քառորդից, Ա. Պերպերյանը միաժամանակ լուսաբանում է Օսմանյան կայսրության պատմության այն հարցերը, որոնք ինչ-որ չափով առնչվում էին Արևմտյան Հայաստանի պատմության այս կամ այն խնդրի հետ։ Աշխատությունում հեղինակը օգտագործել է իր ժամանակի արխիվային և վավերագրական փաստաթղթեր, որոնք հանդիսանում են սկզբնաղբյուր Արևմտյան Հայաստանի պատմության հարցերով զբաղվող հետազոտողի համար։ Գրքին կցված է կարևոր դեպքերի և հայտնի դեմքերի ընդարձակ ժամանակագրություն, որը ավելի է բարձրացնում աշխատության արժեքը։

XIX դարի կեսի հեղինակներից է Մկրտիչ Դադյանը, որը 1867 թ. ֆրանսերեն հրատարակել է «Ժամանակակից հայկական հասարակությունը։ Հայերը Օսմանյան կայսրությունում» խորագրով աշխատությունը, որը 1878 թ. ռուսերեն լույս է տեսել Թիֆլիսում[7]։ Դադյանը այս աշխատությունում տալիս է

---

1 Մ. Չամչեան. Պատմութիւն հայոց, ի սկզբանէ աշխարհի մինչև 1784. հ. 3, Վենետիկ, 1786։

2 Ղ. Ինճիճեան. Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. մասն Ա, հ. Ա, Վենետիկ, 1806, հ. Ե, Վենետիկ 1804։ Նույնի՝ Դարապատում (ուր հատորով). Վենետիկ, 1824, 1825, 1826, 1828։

3 Գ. Այվազովսկի. Պատմութիւն օսմանեան պետութեան. հ. Ա, Բ, Վենետիկ, 1841։

4 Ա. Գալֆայան. Համառոտ պատմութիւն միջին դարու. Վենետիկ, 1850։

5 Ղ. Ալիշան. Յուշիկք Հայրենեաց հայոց. հ. Ա, Վենետիկ, 1869։ Նույնի՝ Տեղեկագիր Հայոց Մեծաց. Վենետիկ, 1853։ Նույնի՝ Հայապատում. Վենետիկ, 1901։

6 Ա. Գերպերեան. Պատմութիւն հայոց, սկսեալ ի 1772 ամէ փրկչին մինչև ի ցամն. 1860 հանդերձ կարևոր տեղեկութեամբ և ժամանակագրութեամբ երեւելի իրաց. Կոստանդնուպոլիս, 1871։

7 М. Дадиан. Армяне Оттоманской империи. Тифлис, 1878.

Օսմանյան կայսրության ընդհանուր նկարագիրը, ուշագրավ փաստեր է հաղորդում արքունիքի ներքին կյանքի, վարք ու բարքի մասին։ Աշխատությունն ուշագրավ է նաև այն տեսակետից, որ ցույց է տրված Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների և հատկապես հայերի խաղացած դերը կայսրության տնտեսական ու մշակութային կյանքում։ Դադյանի աշխատության շատ էջեր նվիրված են հայերի սոցիալ-քաղաքական կյանքի, ժողովրդական կրթության, պարբերական մամուլի, գրականության, գիտության, արվեստի հարցերին, հայերի թվին և այլն։

Ինչպես Արևմտյան Հայաստանի պատմության, այնպես էլ նրա հետ առընչվող Օսմանյան կայսրության պատմության հարցերին անդրադարձել է Ալեքսանդր Երիցյանը։ Նրա աշխատությունները՝ առատ նյութ են պարունակում Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության XIX դարի պատմության ուսումնասիրության համար։ Ա. Երիցյանի երկհատորյակում հանգամանորեն շարադրված են հետևյալ հարցերը. տաճկահպատակ հայոց դրությունը, ռուս-թուրքական պատերազմը, Բաբերդի և Էրզրումի նվաճումը, Ադրիանապոլսի դաշնագրությունը, արևմտահայերի գաղթը։

Ի վկայություն հայերի ռուսական կողմնորոշման հեղինակը բերում է ռուսական բանակի սպաների կարծիքները։ Այսպես, նկարագրելով ռուսական զորքերի կողմից Էրզրումի գրավումը 1829 թ. հունիսի 27-ին, վկայակոչում է մի սպայի այն խոսքերը, թե Պասկևիչի զորքի առաջխաղացման ընթացքում Բասենի հայ գյուղացիությունը «յուրյանց ունեցած-չունեցածը անկեղծ իր սիրով ընծա էին բերում ռուսաց զորքերին» (էջ 418)։ Իսկ Բայազետի համար սղված համառ մարտերը նկարագրելիս մեջ է բերում գեներալ Պոպովի հետևյալ խոսքերը. «Մեծ արիությամբ պատերազմում էին հայք։ Սոքա կռվում էին և մեռնում որպես հերոսներ. սոցա գլխավորները միշտ առաջ էին, դրեթե բոլորն էլ վիրավորվեցին» (էջ 71)։

Արևմտահայության պատմության մի շարք հարցեր են լուսաբանվել Ստեփանոս Պալասանյանի աշխատությունում[9]։ Ս. Պալասանյանը նյութի շարադրանքը սկսել է հայ ժողովրդի պատմության սկզբից և հասցրել է մինչև XIX դարի 80-ական թթ.։ Մեծածավալ այս գրքում բավական էջեր են նվիրված Հայաստանը նվաճելու համար օսմանյան և պարսից պատերազմներին, Արևմտյան Հայաստանի վիճակին և այլ հարցերի։

Ինչպես Օսմանյան կայսրության լծի տակ ընկած բոլոր քրիստոնյա ժողովուրդները, այնպես էլ հայերը, գրում է հեղինակը, «քաղաքական իրավունքների կողմից շատ էին տարբերվում տիրապետող մահմեդական տարրից, որ անարգական աչքով էր նայում նոցա վրա՝ իբրև անհավատների (գավուր) ու ստրուկների վրա։ Հայք մինչև անգամ հագուստով պարտավոր էին տանաղանվել բուն օսմանցիներից և ոչ միայն զենք կրելու իրավունք չունեին, այլ ստիպված էին որոշյալ գույնի ու ձևի զգեստներ հագնել, և ով այս կանոնից շեղվում էր, տուգանքի և նույնիսկ մահվան էր ենթարկվում... ոչ ոք ապահով չէր յուր կյանքի ու սեփականության համար» (էջ 704—705)։ Հարկերի գանձման եղանակի մասին գրքում կարդում ենք. «Հարկերը սովորական կերպով չէին հավաքում, այլ կապալով էին տրվում այն մենավաճառներին, որոնք խոստանում էին ամենի վճարել տերության պաշտոնյաներին, որով ժողովուրդը չափից ավելի կեղեքվում էր»։ Բավական էր, շարունակում է հեղինակը, որ մի հայ քիչ-շատ հարստության տեր լիներ, թուրքերը անմիջապես զանազան մեղադրանքներ էին բարդում նրա վրա, աքսորում կամ մահվան էին դատապարտում, և նրա գույքը գրավում էր պետությունը։

Ս. Պալասանյանի բերած հարուստ փաստական նյութը, որի մի մասը նա

---

8 Ա. Երիցյան. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում. մասն Ա (1800—1832). Թիֆլիս, 1894։

9 Ս. Պալասանյան. Պատմություն հայոց, սկզբից մինչև մեր օրերը. Թիֆլիս, 1895։

քաղել է մեզ չհասած սկզբնաղբյուրներից, Արևմտյան Հայաստանի պատմության մասնագետների համար ունի նաև սկզբնաղբյուրի նշանակություն։

Արևմտյան Հայաստանի և գաղութահայ օջախների պատմության հարցերը զբաղեցրել են նաև սփյուռքահայ պատմաբաններին։ Եղեռնից առաջ լույս են տեսել որոշ աշխատություններ, իսկ առաջին աշխարհամարտի օրերին ու նրանից հետո թուրքական սրից ազատված հայ մտավորականները, սփռվելով աշխարհով մեկ, կազմելով հայրենակցական միություններ, ձեռնամուխ եղան մի շարք գործերի հրատարակության, գործեր, որոնք գերազանցապես նվիրված են այս կամ այն նահանգի, քաղաքի, գավառի պատմությանը՝ սկսած նրանց սկզբնավորումից, վերջացրած մեր օրերով։ Ստվարածավալ աշխատություններ են լույս տեսել Կեսարիայի, Մալաթիայի, Վասպուրականի, Կիլիկիայի հայաբնակ նահանգների, Մարաշի, Հաճընի, Զեյթունի, Ուրֆայի, Ադանայի, Զարսանջակի, Խարբերդի և այլ քաղաքների մասին։ Այս աշխատությունների մեջ արժեքավոր տվյալներ են հրապարակվում կարևոր անցքերի վերաբերյալ, սակայն ընդհանուր առմամբ դրանք հանրամատչելի բնույթ ունեն և հեռու են վերլուծական նպատակադրումից։

Նախահեղափոխական տարիներին Հայկական հարցի մասին գրել է նաև պրոֆ. Լեոն։ Նա 1915 թ. Թիֆլիսում հրատարակեց «Հայոց հարցի վավերագրերը» ժողովածուն իր ընդարձակ ներածությունով և վավերագրերի մեկնաբանություններով։ Ժողովածուում ի մի է բերված տարբեր լեզուներով առկա փաստաթղթերի մի զգալի մասը (1877 թ. սկսած)՝ Կ. Պոլսի հայ պատրիարքի և Էջմիածնի կաթողիկոսի աղերսագրերը, մեծ տերությունների դեսպանների զեկուցագրերն ու մասնավոր նամակները և այլն։ Այնուհետև «Армянский вестник» պարբերականի 1916—1917 թթ. համարներում Լեոն նորից հանգամանորեն անդրադարձել է Հայկական հարցի պատմությանը։ Նա ուս ընթերցողին ծանոթացնում էր թուրքական լծի տակ տառապող հայերի ծանր վիճակի, նրանց նկատմամբ թուրք և քուրդ հարստահարիչների, թուրքական կառավարող շրջանների կողմից գործադրվող անասելի ճնշման ու հալածանքների հետ։ Նշված հոդվածաշարում նա մանրամասնորեն լուսաբանում է Հայկական հարցի պատմությունը 1870—1900-ական և 1912—1914 թթ.։

Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի ու գաղութահայ օջախների պատմության հարցերը գրավել են նաև Սովետական Հայաստանի պատմաբանների ուշադրությունը։ Այս ուղղությամբ տարիներ շարունակ մեծ ջանքեր է թափել և գիտական պատկառելի ժառանգություն է թողել պրոֆ. Լեոն։ Նա իր «Հայոց պատմություն» եռահատոր աշխատությունում[10] լուսաբանել է մի շարք հարցեր. սելջուկների արշավանքը Միջին Ասիայից Փոքր Ասիա և սելջուկյան սուլթանության կազմավորումը, XIII դարի սկզբին օսմանյան բեյլիքության, այնուհետև Օսմանյան կայսրության հիմնադրումը։ Լեոն, խոսելով օսմանյան պետության ստեղծման մասին և բնութագրելով թուրք նվաճողներին, ընդգծում է. «Օսմանցիները շատ կարգեր ու հասկացողություններ վերցրին և ոչ միայն քրիստոնյա, այլև բոլորովին ուղղափառ (օրթոդոքս) Բյուզանդիայից։ Այնպես որ Բոսֆորի ափերում կառուցված պետական նոր շենքը իսկապես մի բռնակալություն էր թաթարա-բյուզանդական ճաշակով... Թուրք ժողովուրդը... չուներ ո՛չ արդյունաբերություն, ո՛չ առևտուր, ո՛չ արվեստներ... Լինելով այդպես, նա իր գոյությունը պահպանելու համար, գրեթե միշտ պետք էր զգում ավարառություններ և բռնություններ կատարելու։ Չկար կուլտուրական հող, որի վրա նա կարողանար կապվել իր նվաճած ազգերի հետ փոխադարձ տնտեսական շահերով, համերաշխ աշխատակցության և վաստակելու ու վայելելու իրավունքի հավասարության գաղափարով։ Մնում էր հիմնվել սրի իրավունքի վրա» (էջ 17)։ Լեոն հատուկ գլուխ է նվիրել XVI—XVIII դդ. թուրք-իրանական պատերազմներին, որոնք ավարտվեցին Անդրկովկասի բաժանումով այդ երկու ռազմաֆեոդալական բռնապետությունների միջև։

---

10 Լեո. Հայոց պատմություն. երրորդ հատոր, գիրք առաջին, Երևան, 1960։

Պրոֆ. Լեոն իր աշխատություններում բազմաթիվ էջեր է նվիրել արևմտահայերի իրավադրության, թշվառ դրությանը, մեծ պետությունների քաղաքականությանը Արևելյան և Հայկական հարցերում, արևմտահայերի հեղափոխական գաղափարախոսությանը, հայկական քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների դիրքորոշմանը երիտթուրքերի հեղափոխության շրջանում, Արևմտյան Հայաստանին առաջին աշխարհամարտում, 1915—1916 թթ. հայ ժողովրդի ցեղասպանությանը։

Բ. Ա. Բորյանը իր երկհատոր աշխատությունում[11] բացի հիմնական՝ Հայաստան և միջազգային դիվանագիտությունը պրոբլեմից լուսաբանում է թուրքական կառավարող շրջանների քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, թանզիմաթի ռեֆորմները և արևմտահայության վիճակը, արևմտահայերի ազատագրական պայքարը և մեծ պետությունների դիրքորոշումը, Բեռլինի կոնգրեսը և Հայկական հարցը, 1894—1896 թթ. արևմտահայերի ջարդը, երիտթուրքերի հեղափոխությունը և Հայկական հարցը, առաջին աշխարհամարտը և հայկական կոտորածները, քեմալական շարժման դասակարգային էությունը, Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը քեմալական շարժման նկատմամբ։ Բորյանի ուսումնասիրությունը զերծ չէ թերություններից և ոչ ճիշտ տեսակետներից, որոնց մասին մենք մանրամասնորեն խոսում ենք «Թուրքագիտությունը Սովետական Հայաստանում» հոդվածում[12]։

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը իր ստվարածավալ երկհատոր աշխատությունում, նվիրված Միքայել Նալբանդյանին և նրա ժամանակին[13], պատմական լայն ֆոնի վրա ուսումնասիրել է Արևելյան և Արևմտյան Հայաստանի պատմության մի շարք պրոբլեմներ, որոնցից Արևմտյան Հայաստանին նվիրվածները նա լուսաբանել է Օսմանյան կայսրության պատմության հարցերի հետ սերտորեն շաղկապված։

Ամենակարևոր պրոբլեմներից է սուլթանական ռազմաֆեոդալական բռնապետության դեմ արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրումը։ Այդ գործում մեծ է մեր ակադեմիայի իսկական անդամ Մ. Գ. Ներսիսյանի ներդրումը։ Թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ. արևմտահայերի պայքարին նվիրված իր ստվարածավալ մենագրությունում[14] նա հանգամանորեն քննության է առել թուրքական սուլթանիզմի դեմ այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի ուշագրավ դրվագներով լի պատմությունը։ Մ. Գ. Ներսիսյանի մենագրությունը կարևոր նեռգրում է սովետահայ պատմագրության մեջ։ Սա առաջին կապիտալ, ամբողջական գործն է, որտեղ բազմաթիվ արխիվային փաստաթղթերի և այլ հարուստ աղբյուրների հիման վրա քննության է առնվում ու մեկնաբանվում թուրքական բռնակալության դեմ 1850—1870 թթ. հայ ժողովրդի մղած պայքարի հանգամանալից պատմությունը։ Մ. Ներսիսյանը իր այդ կապիտալ աշխատությունով սկիզբ դրեց մեզանում արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի գիտական ուսումնասիրության գործին։ Աշխատության մեջ դեպքերը, հանգուցային հարցերը տրված են պատմական պրոցեսի կապակցությամբ, ըստ որում հեղինակը հանդես չի գալիս որպես իրադարձությունների ու փաստերի սոսկ էմպիրիկ շարադրող, այլև բազմակողմանիորեն վերլուծելով ազգային-ազատագրական շարժումները, գիտական լուրջ ընդհանրացումներ ու հետևություններ է արել, դրանով իսկ հերքե-

---

11 Б. А. Борян. Армения, международная дипломатия и СССР. Ч. I, М.—Л., 1928; ч. II, 1929.

12 Страны и народы Ближнего и Среднего Востока. XII. Турция. Ереван, 1953.

13 Աշոտ Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը. գիրք 1, Երևան, 1955. գիրք 2, 1956։

14 Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ. Երևան, 1955։ Այս ուսումնասիրությունը որպես դոկտորական դիսերտացիա պաշտպանվել է 1946 թ.։

լով արևմտահայերի պատմությունը կեղծող ինչպես մեր, այնպես էլ եվրոպական և թուրքական պատմաբանների շինծու կոնցեպցիաները։ Գիտակցորեն ժխտելով այլևայլ «տեսություններ», Ներսիսյանը համոզիչ փաստերով ցույց է տվել արևմտահայ ազատագրական շարժման ինքնաբուխ, ժողովրդական-համազգային բնույթը, նրա գաղափարախոսության առաջադեմ և դեմոկրատական էությունը։

Պրոֆեսորը, մեջբերելով 1940-ական թթ. լայն տարածում ստացած գռեհիկ սոցիոլոգիզմի պատմագիտական դրույթները, ճիշտ դիրքերից է լուսաբանել մեր ժողովրդի արևմտահայ հատվածի պատմության շատ բարդ և խճճված հարցեր։

Ազգային-ազատագրական շարժումների կապակցությամբ մենագրության մեջ քննության է առնված նաև հայ բուրժուական ազգի կազմավորման պրոցեսը որպես մի միասնական, ամբողջական երևույթ Հայաստանի երկու հատվածներում՝ ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան։ Հեղինակը ցույց է տվել, որ հայ ազգի կազմավորումը իր հերթին մեծ ազդեցություն է ունեցել ազատագրական շարժումների վրա՝ ուժեղացնելով թուրքական բռնակալության դեմ ուղղված պայքարը։

Հեղինակը հանգամանորեն լուսաբանել է արևմտյան պետությունների բռնած դիրքը արևմտահայերի ազատագրական շարժումների նկատմամբ։ Մ. Ներսիսյանին հաջողվել է հարուստ փաստական նյութի հիման վրա, հիմնական գծերով ցույց տալ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և ԱՄՆ-ի բռնած թշնամական դիրքը ոչ միայն հայ ժողովրդի, այլև սուլթանական բռնապետության լծի տակ գտնվող մյուս ժողովուրդների ազատագրական շաշժումների նկատմամբ։

Արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը XIX դարի 70—80-ական թթ. լուսաբանել է Ռ. Հովհաննիսյանը իր «Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը» արժեքավոր մենագրությունում[15]։ Հեղինակը հանդամանորեն անդրադարձել է այդ շարժումների սոցիալ-քաղաքական պատճառներին ու նշանակությանը, լուսաբանել նրանց ղեկավար կազմակերպությունների գործունեությունն ու գերը, ազատագրական պայքարի գաղափարախոսությունն ու պատմական հեռանկարները։

Այն կոնցեպցիան, թե իբր արևմտահայերը ապրել են բարվոք պայմաններում և մինչև XIX դարի երկրորդ կեսը չեն պայքարել սուլթանական բիրտ կարգերի դեմ, հերքվում է նաև Հ. Անասյանի՝ XVII դարում արևմտահայերի ազատագրական շարժումներին նվիրված հետազոտությունում[16]։ Աշխատության մեջ նոր և հարուստ սկզբնաղբյուրների հիման վրա քննության են առնվում հայ ժողովրդի արևմտյան հատվածի XVII դարի պատմության հետ կապված հարցերը։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարին է նվիրված նաև մեր ակադեմիայի իսկական անդամ Ծ. Պ. Աղայանի ստվարածավալ գիրքը[17]։ Աշխատության նպատակն է, ինչպես գրում է հեղինակը, համառոտակի ուրվագծել հայ ազատագրական պայքարի պատմական ուղին, հիմնականում կանգ առնել նրա հանգուցային ժամանակաշրջանի՝ XIX դարի վերջի և XX դարի սկզբի անցքերի վրա, հատկապես ուշադրություն է դարձվում ժողովրդական զանգվածների հերոսական պայքարի դրվագների վերհանմանը։ Քննարկվում են

---

15 Ռ. Պ. Հովհաննիսյան. Արևմտահայ ազգային ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դ. 70—80-ական թթ.). Երևան, 1965։

16 Հ. Ս. Անասյան. Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում XVII դարում. Երևան, 1961։

17 Ծ. Պ. Աղայան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից. Երևան, 1976։

նաև հայ հասարակական-քաղաքական հոսանքների և կուսակցությունների դերն ու տեղը ազատագրական պայքարի ընթացքում։ Հեղինակը բավական լայն է նվիրել հայդուկային շարժմանը, շարժման մեթոդներին և նրա անձնուրաց հերոս ղեկավարներին։

Արևմտահայերի ազատագրական շարժմանն է նվիրված նաև Կ. Զ. Թառոյանի մենագրությունը[18]։ Գրքում շարադրված է սուլթանական բռնակալական ռեժիմի դեմ XIX դարի վերջին և XX դարի սկզբին արևմտահայերի պայքարը Զեյթունում, Վանում, Մուշում, Զարսանջակում, Կարինում, Սասունում և այլուր։ Այդ պայքարը ջերմ պաշտպանություն էր գտնում ժամանակի առաջադիմական և դեմոկրատական շրջաններում։

Բացի վերը նշված աշխատություններից, մենք ունենք կոնկրետ վայրերին վերաբերող հետազոտություններ։ Այդպիսի հետազոտությունների թվին են պատկանում Վ. Մելիքսեթյանի 1950 թ. լույս տեսած «Զեյթունի 1862 թ. ապստամբությունը» ուսումնասիրությունը[19], Հ. Պողոսյանի «Զեյթունի պատմությունը» աշխատությունը[20] և այլ գործեր։ Վ. Մելիքսեթյանը, ժամանակի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի ընդհանուր ֆոնի վրա հանգամանորեն շարադրելով 1862 թ. ապստամբության պատմությունը, այն սերտորեն կապում է զեյթունցիների ինչպես նախորդ և հետագա տարիների ապստամբությունների, այնպես էլ հայ ազատագրական շարժումների հետ։ Նա վեր է հանում հայ դեմոկրատիայի դերը Զեյթունի ազատագրական շարժումների գործում։

Հ. Պողոսյանի աշխատությունը նվիրված է հերոսական Զեյթունի ամբողջական պատմությանը։ Հեղինակը բազմակողմանիորեն ուսումնասիրել է Զեյթունի պատմությունը սկսած 1409 թ. վերջացրած 1921 թ.։ Հեղինակը իրավացի է, երբ ընդգծում է, թե 1862 թ. Զեյթունի ապստամբության բնորոշ կողմն այն էր, որ դավառի ազատագրության գաղափարի մեջ արտահայտվեց սուլթանական բռնապետության տակ հեծող հայ դանգվածների ազգային-ազատագրական ողջ պայքարը։ 1862 թ. Զեյթունի հերոսամարտը դա հայ ժողովրդի մի փոքր հատվածի ազգային-ազատագրական պայքարն էր, որը լայն արձագանք գտավ Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում, Արևելյան Հայաստանում, աշխարհում սփռված համարյա թե բոլոր հայ գաղթօջախներում։ Նույնիսկ հեռավոր Ինդոնեզիայում Բատավիայի հայ կանայք իրենց զարդերը վաճառում էին և դրամը Զեյթուն առաքում տուժյալներին օգնելու նպատակով։ Ապստամբությունը ամենից ջերմ ընդունվեց Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախի առաջադեմ մտավորականության, գրողների, հրապարակախոսների, պանդուխտ օրամշակների կողմից։ Հեղինակը հավաստի փաստերով հերքում է մեր պատմագրության մեջ գոյություն ունեցող այն տեսակետը, թե իբր «Զեյթունի ապստամբությունը պատրաստել էր Կոստանդնուպոլսում կազմակերպված մի գաղտնի հեղափոխական մարմին, որի հիմնադիրը եղել է ինքը Միքայել Նալբանդյանը» (էջ 179)։ Հ. Պողոսյանը իրավացի է, երբ շեշտում է, թե լեռնականների ապստամբությունն ուներ պատրաստի հող, դա գրսի հրահրման արդյունք չէր, այլ ժողովրդական զանգվածների մեջ դարերով կուտակված ցասման պոռթկում էր՝ ուղղված օսմանյան բռնապետության դեմ, որը նպատակ ուներ պաշտպանելու լեռնագավառի դարավոր կիսանկախ վիճակը։

Սասունի ժողովրդական շարժումներին է նվիրված Կ. Թառոյանի աշխա-

---

18 Գ. Զ. Թ ա ռ ո յ ա ն. Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբներին. Երևան, 1980։

19 Վ. Գ. Մ ե լ ի ք ս ե թ յ ա ն. Զեյթունի 1862 թ. ապստամբությունը.—Հայաստանի պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. 2, Երևան, 1950։ Նույնի՝ Զեյթունի հերոսամարտը. Երևան, 1962։

20 Հ. Մ. Պ ո ղ ո ս յ ա ն. Զեյթունի պատմությունը 1409—1921. Երևան, 1969։

տությունը[21], որտեղ լուսաբանված է սուլթանական իշխանությունների բիրտ ճնշման դեմ սասունցիների 1890—1894 թթ. հերոսական պայքարը։

Արևմտյան Հայաստանի հիմնական պրոբլեմներից է ագրարային հարցը, օսմանյան կառավարության վարած ագրարային քաղաքականության բացահայտումը։ Այդ բավական բարդ ու խճճված պրոբլեմը գրեթե չի ուսումնասիրված։ Դրան է նվիրված մեր՝ «Օսմանյան կառավարության ագրարային քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում XIX դարի երկրորդ կեսին» մենագրությունը[22]։

Ուսումնասիրությունում, քննական վերլուծության ենթարկելով ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում և համեմատելով Օսմանյան կայսրության մյուս շրջանների հետ, ցույց ենք տվել դրանց առանձնահատկությունները։ Լուսաբանվում են կայսրությունում գոյություն ունեցող հողատիրության տարբեր ձևերը, որոնք տարբեր ցեղերի և ազգությունների պատմական պայմանների և սոցիալ-տնտեսական զարգացման արգասիքն էին։ Աշխատությունում բերված հարուստ նյութը ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային խայտաբղետ կազմը բարդացնում էր ագրարային հարցը և ագրարային հարաբերությունները։ Ցույց է տրվում, որ թեկուզ սուլթանական կառավարությանը հաջողվեց վերջ տալ դերեբեյիների քաղաքական ինքնուրույնությանը, սակայն արևելյան և հարավ-արևելյան Անատոլիայում նրանք շարունակում էին իշխել տնտեսական կյանքում։

Գիտական շրջանառության մեջ դնելով արխիվային նյութեր, մենք լուսաբանում ենք թուրքական կառավարության հարկային քաղաքականությունը, որը կազմում էր օսմանյան կառավարության ագրարային քաղաքականության անբաժանելի մասը։ Հանգամանորեն լուսաբանված են պետական և ֆեոդալական հարկերը և հարկահավաքման ձևերը։ Խոսելով Արևմտյան Հայաստանում Թուրքիայի կառավարող շրջանների անցկացրած վարչական փոփոխությունների մասին, եկել ենք այն եզրահանգման, որ այդ փոփոխությունները հետապնդում էին մի նպատակ՝ ապահովել ազգաբնակչության մահմեդական տարրի գերակշռությունը։

Վերլուծելով Օսմանյան կայսրության ագրարային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, աշխատության մեջ ցույց է տրված, որ կայսրությունը հայկական հողերի մասսայական բռնագրավումների, հարկային սիստեմի շտեսնված ճնշման, հարստահարությունների ուժեղացման միջոցով ձգտում էր արևմտահայերի տնտեսական քայքայմանը, որը նպաստում էր Արևմտյան Հայաստանը հայերից մաքրելու նրա քաղաքական ծրագրի իրագործմանը։

Ագրարային հարցի բացահայտմանն է նվիրված նաև պրոֆ. Ա. Ս. Համբարյանի մենագրությունը[23]։ Հեղինակը քննարկել է 1856—1914 թթ. ժամանակաշրջանի ագրարային հարաբերություններին վերաբերող հարցերի մի ամբողջ կոմպլեքս՝ ագրարային հարաբերությունների բնութագրումը, թուրքական կառավարության ագրարային քաղաքականությունը և ֆեոդալական դասակարգը Արևմտյան Հայաստանում, գյուղացիների կատեգորիաները և նրանց ունեցվածքային շերտավորումը, ֆեոդալական հարկն ու ռենտան, պետական հարկերն ու պարհակները, արդյունաբերության և գյուղատնտեսության վիճակը, գյուղատնտեսության ապրանքային բնույթը, ագրարային հարաբերությունների ետաճումը, կալվածատիրական հողատիրության ընդարձակումը, գյուղացիության կիսաճորտացումն ու ճորտացումը, ագրարային հարաբերությունների առանձնահատկությունները Արևմտյան Հայաստանում 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո և ագրարային հարցի լուծման ուղիներն

21 Կ. Թառոյան. Ժողովրդական շարժումները Սասունում. Երևան, 1966։

22 Е. К. Саркисян. Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине XIX в. Ереван, 1957.

23 Ա. Ս. Համբարյան. Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914). Երևան, 1965։

Արևմտյան Հայաստանում և այլն։ Նշված հարցերը հեղինակը լուսաբանել է հարուստ նյութի հիման վրա։ Ընդգծելով թուրքական սուլթանների հայատյաց քաղաքականությունը և այդ կապակցությամբ շոշափելով քրդական շարժումների բնութագրման հարցը, Ա. Համբարյանը նշում է, որ թուրքական կառավարությունը քրդական շարժումներին տալիս էր հակահայկական ուղղություն։

Ա. Համբարյանի մյուս աշխատությունում[24] հանգամանորեն լուսաբանվում են Թուրքիայի կառավարող շրջանների հողային ու ազգային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1908—1914 թթ.։ Մենագրությունում վերլուծվում է երիտթուրքերի հողային քաղաքականությունը և կոնկրետ փաստերով ցույց է տրվում, որ նրանք ինչպես ամբողջ Երկրում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում չլուծեցին հողային հարցը։ Ամենուրեք պահպանվեցին աղաների հսկայածավալ տիրույթները, իսկ գյուղացիները մնացին առաջվա պես սակավահող ու հողազուրկ։

Արևմտյան Հայաստանում աղաները, օգտվելով երիտթուրքերի պաշտպանությունից, շարունակեցին գյուղացիների հողերի բռնագրավումները և ավելի վատթարացրին նրանց վիճակը։ Հեղինակը ցույց է տալիս, որ 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումը չվերացրեց կայսրությունում տիրապետող ֆեոդալական հարաբերությունները, գյուղացիների բազմաթիվ հարկերն ու պարհակները։ Երիտթուրքերի կառավարությունը նոր տուրքեր սահմանեց գյուղացիների վրա և առագացրեց նրանց տնտեսական քայքայումը։

Ա. Համբարյանը հանգամանորեն լուսաբանել է հայկական բարենորոգումների հարցը 1913—1914 թթ. և ցույց է տվել բարենորոգումների ձախողման դրդապատճառները։

Հիմնականում հողային հարաբերությունների հարցին է նվիրված նաև Ս. Մարկոսյանի մենագրությունը[25]։ Այդ ուսումնասիրությունում հեղինակը մանրամասն ցույց է տալիս Թուրքիայում տիրապետող հողատիրության ֆեոդալական եղանակի սպեցիֆիկ կողմը։ Վերլուծելով հայ-քրդական հարաբերությունները, նա եզրակացնում է, որ հայ-քրդական հարաբերությունների հարցը հիմնականում հողային հարաբերությունների հարցն է, ավելի ճիշտ՝ հողային հարցի այն սպեցիֆիկ բնույթը, որ դարեր շարունակ իշխում էր Թուրքիայում և XIX դարի քառասունական թվականներին օրենսդրական կարգով վերացված հայտարարվեց. ընդ որում, գոնե հայ իրականության մեջ այդ փոփոխությունը մնաց անվանական, իրականում շարունակելով պահպանել իր վաղեմի բնույթը։ Ս. Մարկոսյանը, խոսելով Թուրքիայում տիրապետող հողատիրության ֆեոդալական սիստեմի մասին, ընդգծում է, որ նա ջանացել է որոշ չափով պարզաբանել հողային հարաբերության այդ ուրույն բնույթը և ցույց տալ, որ XIX դարի վերջերին հայ ժողովրդի ապրած ողբերգության մեջ վճռական դեր է խաղացել նաև այդ հարցը։

XVI—XVIII դդ. արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական ամբողջական պատմությանն է նվիրված Մ. Զուլալյանի ուսումնասիրությունը[26], մի շրջան, որը գրեթե դուրս է մնացել մեր պատմաբանների տեսադաշտից։ Մ. Զուլալյանը հայկական, արևելյան ու օտար աղբյուրների լայն հիմքի վրա լուսաբանում է Արևմտյան Հայաստանի վիճակը XVI—XVIII դդ., ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրությունում, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում նշված ժամանակաշրջանում և այլն։

Քանի որ Արևմտյան Հայաստանը գտնվում էր Օսմանյան կայսրության պետական սահմանների շրջանակներում, հասկանալի է, որ անհնարին է նրա

---

24 Ա. Ս. Համբարյան. Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908—1914). Երևան, 1979։

25 Ս. Մարկոսյան. Արևմտահայության վիճակը XIX դարի վերջին. Երևան, 1968։

26 Մ. Կ. Զուլալյան. Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ. Երևան, 1980։

պատմության ուսումնասիրումը կայսրության պատմության ոլորտից դուրս։ Առաջնորդվելով այս սկզբունքով, սույն աշխատության մեջ XVI—XVIII դդ. Արևմտյան Հայաստանի պատմության հարցերը շարադրված են կայսրության պատմության հարցերի հետ ամենալայն առնչակցության մեջ։

Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակին և նրանց ռուսական կողմնորոշմանն է նվիրված Ա. Ն. Ներսիսյանի աշխատությունը[27]։ Սույն հետազոտությունում հեղինակը ցույց է տալիս արևմտահայերի տնտեսական ու քաղաքական ծանր պայմանները, թուրքական ռազմաֆեոդալական լծի տակ նրանց կրած անլուր տառապանքները, ազգային, կրոնական հալածանքները XIX դարի առաջին կեսին։ Հեղինակը խոսում է արևմտահայերի ազատագրական պայքարի, նրանց ռուսական օրիենտացիայի մասին։

XIX դարի արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությանն է նվիրված Հ. Ղազարյանի ուսումնասիրությունը[28]։ Հեղինակը գրականության, սկզբնաղբյուրների և արխիվային վավերագրերի հիման վրա հետազոտել է արևմտահայերի պատմության առանցքային հարցերը 1800—1870-ական թթ.։ Աշխատությունում բնութագրվում են ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, բացահայտվում է օսմանյան պետության թուրք և քուրդ վերնախավերի վարած ազգային ու սոցիալական բիրտ քաղաքականությունը, հատուկ ուշադրություն է դարձվում քաղաքային կյանքի հետազոտմանը, ցույց է տրվում հայ առևտրաարդյունաբերական բուրժուազիայի խաղացած դերը Թուրքիայի տնտեսական կյանքում։ Հեղինակը հանգամանորեն վերլուծում է արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը «Թանզիմաթի» ժամանակաշրջանում։ Նա շարադրում է քրդական դերեբեյությունների վերացման պատմությունը, հայ-թուրքական, հայ-քրդական հարաբերությունները, ցույց է տալիս «Թանզիմաթի» խաբուսիկ բնույթը արևմտահայության համար։ Աշխատության մեջ հեղինակը անդրադառնում է նաև սուլթանական բռնատիրության դեմ ոտքի ելած արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումներին, «ազգային սահմանադրությանը», հասարակական-քաղաքական հոսանքների պատմությանը։ Հ. Ղազարյանը իր գրքում առանձին գլուխներ է նվիրել Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ գաղթօջախների պատմությանը, վերլուծել է այն հարցերը, որոնք առաջ էին եկել նոր պատմաշրջանում։

Ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ Արևմտյան Հայաստանի XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի տնտեսական վիճակի վերլուծմանն է նվիրված Հ. Գ. Ինճիկյանի մենագրությունը[29]։ Ուսումնասիրությունում հեղինակը լուսաբանում է Օսմանյան կայսրության բազմազգ բուրժուազիայի ծագումն ու զարգացումը, այդ թվում և Արևմտյան Հայաստանում ֆեոդալիզմի քայքայմանը զուգահեռ բազմազգ բուրժուազիայի (այսպես կոչված «օսմանյան» բուրժուազիայի) ձևավորման մի շարք առանձնահատկություններ, բնդգծել է այլազգի, գլխավորապես ոչ մուսուլման ժողովուրդների (սլավոնական, հայկական, հունական և հրեական) բուրժուազիայի ծագման և զարգացման յուրահատկությունները, նշել է, որ բուրժուազիայի հիշյալ խմբերը երկար ժամանակ կարևոր դեր էին խաղում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում։ Միաժամանակ ի հայտ են բերված թուրք ազգային բուրժուազիայի հետամնացության և դանդաղ զարգացման պատճառները։ Այս ամենով պայմանավորված իրավիճակը, երբ տասնյակ տարիներ կայսրությունում հիմնական դեր էր կատարել այլազգի բուրժուազիան, հանդիսանում է հենց երկրի տնտեսական զարգացման յուրահատկություններից մեկը։

---

27 Ա. Ն. Ներսիսյան. Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և նրանց ռուսական օրիենտացիան XIX դարի առաջին կեսին. Երևան, 1962։

28 Հ. Մ. Ղազարյան. Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ. Երևան, 1967։

29 О. Г. Инджикян. Буржуазия Османской империи. Ереван, 1977.

Արևմտահայության պատմության և ոչ մի հարց այնքան մեծ ուշադրության չի արժանացել հայ և օտար հեղինակների կողմից, որքան Հայկական հարցը։ Լույս են տեսել հայրենական և արտասահմանյան հեղինակների բազմաթիվ աշխատություններ։

Հայկական հարցի կապակցությամբ միջազգային դիվանագիտության նենգ քաղաքականությունը մերկացվել է Բ. Բոռյանի վերը նշված աշխատությունում և Լեոյի ուսումնասիրություններում[30]։

Հայկական հարցին է նվիրված Ա. Նասյանի մենագրությունը[31]։ Այս ուսումնասիրությունում հեղինակը լուսաբանել է մի շարք հարցեր՝ հայերի գենոցիդը և միջազգային դիվանագիտությունը, Հայկական հարցը և ազգերի լիգան, Սովետական Ռուսաստանի հաշտարարական դերը Մերձավոր Արևելքում և այլն։ Ա. Նասյանը, համառոտակի կանգ առնելով Հայկական հարցի վրա նրա սկզբնավորումից մինչև առաջին աշխարհամարտի սկիզբը, իրավացիորեն եզրակացնում է, որ Հայկական հարցը շարունակ մնում էր միջազգային դիվանագիտության օրակարգում և որպես միջազգային հարց նոր կերպարանք ու բովանդակություն ձեռք բերեց համաշխարհային պատերազմի նախօրյակին ու պատերազմի տարիներին։

Հայկական հարցին անդրադառնում է Ծ. Պ. Աղայանը վերը բերված աշխատությունում։ Մենագրության երկրորդ գլխում՝ «1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը», խոսվում է Հայկական հարցի ծախողման պատճառների մասին։

Հայկական հարցին են նվիրված Ջ. Կիրակոսյանի աշխատությունները[32], ուր քննարկվում են այն հարցերը, որոնք առնչվում են արևմտահայության քաղաքական ճակատագրին, Հայկական հարցի շուրջը դիվանագիտության գործողություններին։ Հեղինակը խոսում է Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի, Խրիմյան Հայրիկի գործունեության, Հայկական հարցի առծածման, XIX դարի վերջին քառորդին արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի, մեծ պետությունների ռեակցիոն գործունեության և այլ հարցերի մասին։

Հայկական հարցում իմպերիալիստական Գերմանիայի նենգ ու դաժան քաղաքականությանն է նվիրված պրոֆ. Ստ. Ստեփանյանի մենագրությունը[33]։ Հեղինակը, օգտվելով Գերմանական Դեմոկրատական Հանրապետության արխիվային ֆոնդերից ու գրադարաններից, հայտնաբերել ու գիտական շրջանառության մեջ է դրել արժեքավոր փաստաթղթեր, որոնք մերկացնում են Արևմտյան Հայաստանի նկատմամբ բիսմարկյան ու վիլհելմյան Գերմանիայի որդեգրած նենգ քաղաքականությունը։

Հայկական հարցի պատմությանն է նվիրված Խ. Բադալյանի հրատարակած աշխատությունը[34], ուր մասնավորապես ցույց է տրված արևմտյան տերությունների բռնած թշնամական դիրքը հայ ժողովրդի նկատմամբ։

1972 թ. լույս տեսավ մեր մենագրությունը՝ նվիրված Օսմանյան կայսրության քաղաքականությանը Արևմտյան Հայաստանում և մեծ պետությունների դիվանագիտությանը Հայկական հարցում[35]։ Այստեղ ցույց է տրված, որ Օս-

---

30 Լեո. Անցյալից. Թիֆլիս, 1925։ Նույնի՝ Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը. հ. Ա, Փարիզ, 1934. հ. Բ, 1935։

31 Ա. Նասյան. Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը. Երևան, 1965։

32 Ջ. Ս. Կիրակոսյան. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.). Երևան, 1978։ Նույնի՝ Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.). Երևան, 1980։

33 С. Степанян. Армения в политике империалистической Германии. Ереван, 1975.

34 Խ. Ա. Բադալյան. «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878. Երևան, 1955։

35 Е. К. Саркисян. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв. Ереван, 1972.

մանյան կայսրության հայահալած քաղաքականությունը, հատկապես 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո, ուղղակի հետապնդում էր հայերի բնաջնջումը՝ տնտեսական քայքայման (հողազրկման, հարստահարությունների ուժեղացման), արտաքսման ու ֆիզիկական ոչնչացման միջոցներով։ Օսմանյան կայսրության կառավարող շրջանների այդ քաղաքականությունը կապված էր 1870—80-ական թթ. նոր ծագած թուրքական ազգային բուրժուազիայի ու նրա միանգամայն շովինիստական ռեակցիոն քաղաքականության՝ պանօսմանիզմի, պանիսլամիզմի ու պանթուրքիզմի հետ։ Աշխատությունում մերկացվում են պատմության թուրք կեղծարարները, որոնք փորձում են ցույց տալ, որ Թուրքիայում հայկական հարց գոյություն չի ունեցել, որ այն հնարել են եվրոպական տերությունները Թուրքիայի վրա ճնշում գործադրելու՝ իրենց շահերը պաշտպանելու համար։

1962 և 1964 թթ. հրատարակվեցին մեր երկու ուսումնասիրությունները[36], որոնցում արխիվային նյութերի հիման վրա լուսաբանել ենք Օսմանյան կայսրության ներքին դրությունը առաջին աշխարհամարտի նախօրյակին, վեր ենք հանել պանիսլամիզմի ու պանթուրքիզմի գաղափարախոսությունների ագրեսիվ բնույթը, ցույց ենք տվել պատերազմին մասնակցելու Օսմանյան կայսրության բուն պատճառները, արել ենք պատմաքննական մի շարք դիտողություններ ինչպես սովետական, այնպես էլ օտարերկրյա պատմաբանների աշխատությունների վերաբերյալ։ Նոր գնահատականներ են տրված Լիման ֆոն Սանդերսի գերմանական ռազմական միսիան Ստամբուլ ուղարկվելու և առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության գերմանա-ավստրիական բլոկի կողմն անցնելու պատճառներին ու 1914 թ. օգոստոսի 2-ի գերմանա-թուրքական գաղտնի պայմանագրի կնքմանը։ Լուսաբանել ենք հայ ժողովրդի գենոցիդի պատմությունը՝ ցույց տալով երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության անմիջական կապը նրանց պանթուրքիստական դավադրական պլանների հետ։

Առաջին աշխարհամարտի շրջանի հարցերով՝ կապված արևմտահայության հետ, զբաղվել է Ջ. Ս. Կիրակոսյանը։ Նա 1965 թ. լույս ընծայեց իր մենագրությունը[37], ուր խոսվում է արևմտահայության ծանր վիճակի, Հայկական հարցի, 1915 թ. Մեծ եղեռնի, միջազգային իմպերիալիզմի դավադիր քաղաքականության, հայ ազգայնական կուսակցությունների գործունեության և այլ հարցերի մասին։

Արևմտահայերի 1915—1916 թթ. ողբերգության բացահայտմանն է նվիրված 1966 թ. հրատարակված փաստաթղթերի ստվարածավալ և արժեքավոր ժողովածուն, որի կազմողներն են Մ. Գ. Ներսիսյանը և Ռ. Գ. Սահակյանը (Մ. Ներսիսյանի խմբագրությամբ)[38]։ Ժողովածուում բերված են սուլթանական և երիտթուրքերի կառավարությունների որոշումները արևմտահայերի ցեղասպանության մասին։ Բերված փաստաթղթերը անհերքելի վկայություն են թուրք ջարդարարների անասելի ոճրագործությունների և արևմտահայության մեծ ողբերգության մասին։

Ժողովածուում զետեղված են հայկական, ռուսական, արաբական, թուրքական, գերմանական, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան և այլ բազմաթիվ աղբյուրներից Օսմանյան կայսրությունում հայերի գենոցիդի մասին քաղ-

---

36 Е. К. Саркисян. Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны. Ереван, 1962. Նույնի՝ Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին. Երևան, 1964։

37 Ջ. Ս. Կիրակոսյան. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. Երևան, 1965։

38 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией проф. М. Г. Нерсисяна. Ереван, 1966. Второе, дополненное изд.—Ереван, 1982.

ված բազմաթիվ նորահայտ արխիվային փաստաթղթեր և նյութեր։ Փաստաթղթերի մեծ մասը հանդիսանում է դանազան պետությունների դեսպանների, արտաքին գործերի մինիստրների, հյուպատոսների և այլ բարձր պաշտոնյաների գաղտնի դեկուցագրերը, նամակները, հաղորդումները։ Ժողովածուում քիչ չեն նաև ջարդերի ականատեսների (այդ թվում հայ, արաբ, թուրք), ինչպես նաև եվրոպական միսիոներների վկայությունները։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանի և արևմտահայության պատմության որոշ հարցեր արծարծվել են նաև Ս. Վ. Արզումանյանի[39], Ա. Է. Մնացականյանի[40], Ս. Մ. Հակոբյանի[41], Ա. Հ. Հարությունյանի[42], Գ. Ա. Գալոյանի[43], Խ. Ա. Բադալյանի[44] աշխատություններում։ Վերջերս լույս տեսավ Ջ. Կիրակոսյանի աշխատությունը՝ նվիրված երիտթուրքերի ձեռքով կազմակերպված արևմտահայության 1915 թ. ցեղասպանությանը[45]։

Քեմալականների ագրեսիվ քաղաքականության և 1919—1921 թթ. Կիլիկիայում նրանց ագրեսիայի հարցերի լուսաբանմանն է նվիրված Ռ. Գ. Սահակյանի աշխատությունը[46]։ Հեղինակը մերկացնում է ֆրանսիական իմպերիալիստների քաղաքականությունը կիլիկահայերի նկատմամբ։ Նա հարուստ փաստական նյութի հիման վրա ցույց է տալիս քեմալականների հայաջինջ, ազգայնամոլ քաղաքականությունը Կիլիկիայում, որը ըստ էության հանդիսանում էր երիտթուրքերի քաղաքականության շարունակությունը։ Աշխատությունում մանրամասն քննության է ենթարկված քեմալական և ֆրանսիական կառավարությունների միջև Անկարայում 1921 թ. հոկտեմբերի 20-ին կնքված պայմանագիրը։

Մեր պատմարան թուրքագետները զբաղվել են և շարունակում են զբաղվել թուրքական պատմագրության կեղծարարության մերկացումով։ Ուշադրության արժանի են Մ. Կ. Զուլալյանի, Ե. Ղ. Սարգսյանի, Ռ. Գ. Սահակյանի, Ա. Խ. Սաֆրաստյանի՝ այդ խնդրին առնչվող աշխատությունները[47]։

Մ. Զուլալյանի աշխատությունում մերկացվում է հայ ժողովրդի հին և միջին դարերի պատմության նենգափոխումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, տրվում է թուրք պատմագրության կողմից հայ ժողովրդի պատմության աղավաղման և ֆալսիֆիկացիայի հետապնդած նպատակների գիտական ու քաղաքական վերլուծությունը։

---

39 Ս. Վ. Արզումանյան. Հայաստան, 1914—1917 թթ. Երևան, 1969։

40 Ա. Է. Մնացականյան. Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ. Երևան, 1965։

41 С. М. Акопян. Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны. Ереван, 1967.

42 А. О. Арутюнян. Кавказский фронт 1914—1917 гг. Ереван, 1971.

43 Գ. Ա. Գալոյան. Պատմության քառուղիներում. Ազատագրված ժողովրդի վերածնունդը. Երևան, 1982։

44 Х. А. Бадалян. Турецко-германская экспансия в Закавказье 1914—1918 гг. Ереван, 1980.

45 Ջ. Ս. Կիրակոսյան. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ. մասն 1, 2, Երևան, 1982, 1983։

46 Ռ. Գ. Սահակյան. Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ. Երևան, 1970։

47 М. К. Зулалян. Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии. Ереван, 1970. Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան. Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ. Երևան, 1963։ Ե. Ղ. Սարգսյան, Ա. Խ. Սաֆրաստյան. Պատմության հակագիտական լուսաբանման մի քանի փաստերի մասին.—«Արևելագիտական ժողովածու», հ. Ա, Երևան, 1960։ Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Գ. Սահակյան. Հայ ժողովրդի պատմության մի քանի հարցերի ֆալսիֆիկացիան թուրք պատմաբանների աշխատություններում.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ), 1961, № 12։

Ե. Ղ. Սարգսյանի, Ա. Խ. Սաֆրաստյանի և Ռ. Գ. Սահակյանի վերը նշված աշխատություններում ցույց է տրվում, որ ժամանակակից Թուրքիայում լույս տեսնող պատմական, քաղաքական և մեմուարային գրականության մեջ գիտակցորեն կեղծվում ու խեղաթյուրվում է արևմտահայության հատկապես նոր շրջանի պատմությունը։ Արխիվային և հրապարակված բազմաթիվ փաստաթղթերի, օտար աղբյուրների ու գրականության հիման վրա հեղինակները բացահայտել են հայ ժողովրդի այդ շրջանի պատմության մի շարք կարևոր հարցերի նենգափոխումը ծամանակակից թուրք պատմագրության մեջ։

Այսօր, առավել քան երբևէ, հրամայական պահանջ է դարձել գիտական ու գաղափարական հիմնավոր պայքար մղել թուրք ֆալսիֆիկատորների դեմ. իսկ այդ բանն անելու համար ամենից առաջ անհրաժեշտ է շարադրել Արևմտյան Հայաստանի, արևմտահայերի, Կիլիկիայի ամբողջական, լիակատար, սիստեմատիկ պատմությունը և հատկապես հայության խաղացած դերը Թուրքիայի տնտեսական և մշակութային կյանքում, որը մինչև այժմ էլ չի կատարվել ո՛չ սփյուռքահայ և ո՛չ էլ սովետահայ պատմագրության կողմից, թեև Արևմտյան Հայաստանի պատմությանը վերաբերող առանձին հարցեր տեղ են գտել հայ ժողովրդի պատմության ՀՍՍՀ ԳԱ հրատարակած բազմահատորյակի էջերում։

ИЗУЧЕНИЕ ИСТОРИИ ЗАПАДНОЙ АРМЕНИИ В АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Доктор ист. наук Е. К. САРКИСЯН

Резюме

Вопросам истории Западной Армении, Киликии и армянских колоний в Османской империи посвящено немало исследований армянских советских историков. В статье анализируются работы, посвященные национально-освободительной борьбе западных армян против кровавого султанского господства в Западной Армении, аграрной политике султанского правительства и аграрным отношениям, социально-экономическому и политическому положению западных армян, Армянскому вопросу и политике великих держав, Западной Армении в годы первой мировой войны и геноциду западных армян, вопросам фальсификации турецкой историографией истории армянского народа. Указывается, что армянскими советскими авторами проделана значительная работа по разработке проблем Западной Армении, но вместе с тем имеется еще немало вопросов, нуждающихся в разностороннем, глубоком научном исследовании.